10458

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

« 18 » 07 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0096-22

Ձեռնարկողը՝ *«Ադամանդ-Կ» ՍՊԸ*
գ. Արզնի, փ. 5, տ. 75

Գործունեությունը՝ *Ջերմուկի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի «Սարահարթի» և «Կիրճի» տեղամասերի թիվ 30/62, 24/62 և 2/61 հորատանցքերի շահագործման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն*
ՀՀ, Վայոց ձորի մարզ,

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0096-22

<18> 07 2022թ.

Վայոց ձորի մարզի Ջերմուկի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի «Սարահարթի» և «Կիրճի» տեղամասերի թիվ 30/62, 24/62 և 2/61 հորատանցքերի շահագործման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Ադամանդ-Կ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ համայնք

Ներածական մաս. Ջերմուկի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի «Սարահարթի» և «Կիրճի» տեղամասերը գտնվում են Վայոց ձորի մարզի Ջերմուկ առողջարանի տարածքում:

Թիվ 30/62 հորատանցքը գտնվում է Ջերմուկի հանգստավայրի «Սարահարթի» տեղամասում, «Արարատ-Մոր և մանկան» ՓԲԸ-ի («Մոր և մանկան» առողջարան) տարածքում:

Թիվ 24/62 հորատանցքը գտնվում է Ջերմուկի հանգստավայրի «Սարահարթի» տեղամասում, «Արմենիա» առողջարանի տարածքում:

Թիվ 2/61 հորատանցքը գտնվում է Ջերմուկի հանգստավայրի «Կիրճի» տեղամասում, Ջերմուկի հին առողջարանից 120.0մ դեպի հարավ-արևմուտք:

Հորատանցքերի տարածքի հողամասերի տարածքի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերական, ընդերքի օգտագործման և այլ արտադրական նշանակության է, իսկ օգտագործման նպատակը՝ հանքային ջրերի հանքավայրի շահագործում:

Հողամասերի տարածքի մակերեսը կազմում է 895.0մ^2, այդ թվում՝ թիվ 2/61 - 280.0մ^2, թիվ 24/62-185.0մ^2, թիվ 30/62-430.0մ^2, որոնց վրա առկա են կառուցված արտադրական շինություններ ընդհանուր 166.32մ^2 մակերեսով:

Նախատեսվող գործունեությունը, հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի դ. ենթակետի:

Նկարագրական մաս. «Ադամանդ-Կ» ՍՊԸ-ն հանքային ջրի արդյունահանում է իրականացնում Վայոց ձորի մարզի Ջերմուկի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի «Սարահարթի» տեղամասի թիվ 30/62 և 24/62 հորատանցքերից՝ համաձայն

23.11.2012թ. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության տրամադրած արդյունահանման թույլտվության՝ ՇԱԹՎ-29/279 և ընդերքօգտագործման պայմանագրի՝ ՆՊՎ-279:

Պաշարները հաստատվել են 01.01.1967թ.-ի դրությամբ ("Отчёт о гидрогеологических, разведочных и каптажных работах на Джермукском месторождении углекислых терм Армянской ССР в 1961-1966г.г. с подсчётом запасов термальных вод на 01.01.1967 г." Авторы: Берри И.Л., Ктикян Г.Б. и другие): Պաշարները հաստատվել են ԽՍՀՄ Պաշարների Պետական Հանձնաժողովի (ՊՊՀ) կողմից (արձանագրություն թիվ 5251, 13.10.1967թ.):

Ընկերության թիվ 30/62 և 24/62 հորատանցքերից տարեկան տրամադրված ջրաքանակը կազմում է՝ 13000.0մ^3 կամ 0.41 լ/վրկ հանքային ջուր՝ բուժական նպատակով: Այդ թվում՝ 10500.0 կամ 0.33 լ/վրկ թիվ 30/62 և 2500.0 կամ 0.08 լ/վրկ թիվ 24/62 հորատանցքից:

Ներկայումս ընկերությունը ցանկանում է նաև ընդլայնել իր գործունեությունը՝ հանքային ջուրը օգտագործել ռեկրեացիոն (հորատանցք թիվ 2/61) և արդյունաբերական (հորատանցք թիվ 30/62) նպատակով:

Ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ընդհանուր (գումարային) ջրաքանակը կազմում է 38056.1 մ^3/տարի կամ 1.21 լ/վրկ, այդ թվում՝
բուժական նպատակով 10500.0 մ^3/տարի, կամ 0.33 լ/վրկ թիվ 30/62 հորատանցքից և 2500.0 մ^3/տարի, կամ 0.08 լ/վրկ թիվ 24/62 հորատանցքից,
ռեկրացիոն նպատակով (հանգստի նպատակով լողավազաններում օգտագործելու) 15056.1 մ^3/տարի, կամ 0.48 լ/վրկ թիվ 2/61 հորատանցքից,
արդյունաբերական նպատակով 10000.0 մ^3/տարի, կամ 0.32 լ/վրկ թիվ 30/62 հորատանցքից:

Ներկայումս, ընկերությունը ցանկանում է թիվ 30/62 հորատանցքից նորից իրականացնել արդյունաբերական (շշալցման) նպատակով ջրամատակարարում:

Ընկերությունը բուժական նպատակով հանքային ջուրը կշարունակի տրամադրել Ջերմուկի առողջարաններին, իսկ արդյունաբերական նպատակով՝ կտրամադրի շշալցում իրականացնող ընկերություններին կնքված ջրամատակարարման պայմանագրերի հիման վրա:

Ընկերությունը ռեկրեացիոն նպատակով (հանգստի նպատակով լողավազաններում օգտագործելու) հանքային ջուրը կիրականացնի հանքավայրի թիվ 2/61 հորատանցքի տարածքում գտնվող, ընկերության սեփականությունը հանդիսացող հողատարածքում կառուցված Էլիպսոիդ՝ (8.0մx6.0մx1.3մ) չափսերով լողավազանում: Լողավազանը գործելու է տարեկան 6 ամիս (180 օր): Լողավազան լցվող հանքային ջրի ծավալը կկազմի՝ 60.3 մ^3:

Հանգստի նպատակով լողավազանը գործելու է տարեկան 6 ամիս (180 օր):

Լողավազանի սկզբնական լցումից հետո հանքային ջուրն ամբողջությամբ կփոխվի 10 օրը մեկ անգամ: Մնացած ժամանակ կպահպանվի հանքային ջրի թույլ մշտական հոսք:

Ջրապահանջը լոզավազանի սկզբնական լցման և ջրափոփոխության համար կազմում է՝ 1145.7մ^3 հանքային ջուր: Հանքային ջրի լրիվ ջրափոխությունը կատարվում է 1 օրվա ընթացքում: Մշտական հոսքը պահպանվում է 161 օր:

Թարմ հանքային ջրի տարեկան պահանջը մշտական հոսքի ստեղծման համար հավասար է՝ 13910.4մ^3/տարի:

Ընդամենը թարմ հանքային ջրի տարեկան պահանջը լողավազանի համար կազմում է՝ 15056.1 մ^3/տարի:

Լողավազանի հարևանությամբ նախատեսվում է կառուցել սպասարկող շենք շինություն:

Ջերմուկի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի «Սարահարթի» և «Կիրճի» տեղամասերի թիվ 30/62, 24/62 և 2/61 հորատանցքերի գտնվելու վայրում սողանքային երևույթներ չկան:

Ըստ հաշվետվությունում նշված տեղեկատվության հանքավայրի տարածքում չեն արձանագրվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելավայրեր և ապրելավայրեր, բնության հուշարձանները գտնվում են հորատանցքերից նվազագույնը 635մ հեռավորության վրա:

«Սարահարթի» և «Կիրճի» տեղամասերի թիվ 30/62, 24/62 և 2/61 հորատանցքերը գտնվում են բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններից նվազագույնը 1.1կմ հեռավորության վրա:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

- Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունաբերական շահագործումը պետք է իրականացնել հատուկ ջրհավաք (կապտաժային) հորատանցքից կահավորված չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով: Շահագործման ժամանակ չի թույլատրվում շահագործվող ջրհավաք հորատանցքից ՊՊՀ-ի կողմից հաստատված պաշարների չափից ավելի արդյունահանումը:
- Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հորատանցքերի շահագործումը պետք է իրականացվի հիդրոերկրաբանական պայմաններին, հանքային ջրերի հաստատված պաշարների քանակին, նրանց քիմիական կազմին, ջերմաստիճանին և ռեժիմին խիստ համապատասխան:
- Իրականացնել սիստեմատիկ հիդրոերկրաբանական ռեժիմային ստացիոնար մշտադիտարկումներ (մոնիտորինգ) ջրհավաք հորատանցքի շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի նկատմամբ: Ջրհավաք հորատանցքի շահագործումը և հանքային ջրի ռեժիմի հսկողությունն իր մեջ ներառում է հանքային ջրերի քանակի և որակի նկարագիրը, նրա երկարատև շահագործման պայմաններում, ինչպես նաև հորատանցքի պահպանումը՝ սպառումից, աղտոտումից և աղակալումից:
- Հանքային ջրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ է ապահովել ջրերի կոնդիցիոն քիմիական կազմի պահպանումը:
- Նախատեսվում է հարակից տարածքները չխախտել և չաղտոտել կենցաղային աղբով և այլ տեսակի թափոններով:

Հանքավայրի թիվ 30/62, 24/62 և 2/61 հորատանցքերի տարածքում սահմանված կարգով, կիրականացվեն մշտադիտարկումներ (մոնիթորինգ)՝ ջրի ծախսի, ճնշման (մակարդակի) և ջերմաստիճանի չափումներ կկատարվեն 10 օրը մեկ անգամ, ինչպես նաև կկատարվեն մթնոլորտային օդի նմուշարկում տարեկան մեկ և հողային ծածկույթի նմուշարկում՝ տարեկան երկու անգամ:

Հանքավայրի հորատանցքերը շատրվանում են հիմնականում գազլիֆտի հաշվին բացասական դինամիկ մակարդակի պայմաններում:

Հանքավավայրի հորատանցքերի կոորդինատներն են ARM WGS-84 կոորդինատների համակարգով

Հորատանցքի համարը	II. ARM WGS-84 կոորդինատների համակարգով		Հորատանցքի բացարձակ բարձրությունը, մ
30/62	X = 4412030	Y = 8557388	2114.0
24/62	X = 4411943	Y = 8556976	2105.5
2/61	X = 4411798	Y = 8557800	2075.5

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան տրամադրել 80.0 հազար դրամ:

Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցության համար ընկերությունը տարեկան նախատեսում է 250 000 դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Վայոց ձորի մարզի Ջերմուկի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի «Սարահարթի» և «Կիրճի» տեղամասերի թիվ 30/62, 24/62 եվ 2/61 հորատանցքերի շահագործման աշխատանքների վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն և Վայոց ձորի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Հանքավայրի թիվ 30/62, 24/62 և 2/61 հորատանցքերի տարածքում սահմանված կարգով, անհրաժեշտ է իրականացվեն մշտադիտարկումներ (մոնիթորինգ)՝ ջրի ծախսի, ճնշման (մակարդակի) և ջերմաստիճանի չափումները կատարվեն 10 օրը մեկ անգամ, ինչպես նաև կատարվեն մթնոլորտային օդի նմուշարկում տարեկան մեկ և հողային ծածկույթի նմուշարկում՝ տարեկան երկու անգամ:
-Հանքավայրի սանիտարական պահպանության գոտու սահմաններում պետք է պահպանվի ռեժիմ, որը կապահովի բարձր սանիտարահիգիենիկ պայմաններ և կպաշտպանի հանքային ջրերի հանքավայրը աղտոտումից և սպառումից:
-Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունաբերական շահագործումը պետք է իրականացնել հատուկ ջրհավաք (կապտաժային) հորատանցքից կահավորված չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով: Շահագործման ժամանակ չի թույլատրվում շահագործվող

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ "ՍՊԵՐՏԻԶՆԻ ԿԵՆՏՐ" ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
RA ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

ջրհավաք հորատանցքից ՊՊՀ-ի կողմից հաստատված պաշարների չափից ավելի արդյունահանումը:
-Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հորատանցքերի շահագործումը պետք է իրականացվի հիդրոերկրաբանական պայմաններին, հանքային ջրերի հաստատված պաշարների քանակին, նրանց քիմիական կազմին, ջերմաստիճանին և ռեժիմին խիստ համապատասխան:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ադամանդ-Կ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Վայոց ձորի մարզի Ջերմուկի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի «Սարահարթի» և «Կիրճի» տեղամասերի թիվ 30/62, 24/62 և 2/61 հորատանցքերի շահագործման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Գոհար Մինասյան